

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԼԵՇԱՎՅԻՆ ԵՐԿՐԱՀԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԲՆԱՏԵԽՆԱԾԻՆ ՈՒՍԿԵՐԻ
ԿԱՆԱՏԵՍՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
(ԼՈՒԻ-ՓԱՄԲԱԿ ԵՎ ԱՂԱՏԵՎ-ՏԱՎՈՒԾ ՏԱՐԱԾՈՉԶԱՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ)

Ի՞՞ւ. 03.01. «Ֆիզիկական աշխարհագրություն» մասնագիտությամբ
աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱ ԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

МИНИСТЕРСТВО НАУКИ И ОБРАЗОВАНИЯ РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
КАРАПЕТЯН АРТУР ГЕВОРГОВИЧ
**ПРОГНОЗИРОВАНИЕ И УПРАВЛЕНИЕ ПРИРОДНО-ТЕХНОГЕННЫХ РИСКОВ
ГОРНЫХ ГЕОСИСТЕМ**
(НА ПРИМЕРЕ РЕГИОНОВ ЛОРИ-ПАМБАК И АГСТЕВ-ТАВУШ)

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени кандидата географических наук
по специальности 24.03.01 - „Физическая география,

ЕРЕВАН - 2015

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում
Գիտական դեկանավար՝ աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Վոլոյայի Խոյեցյան**

**Պաշտոնական ընդունակության՝ աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Յովիկ Յախշիբեկի Սայադյան
աշխ. գիտ. թեկնածու
Ծուշանիկ Գուրգենի Ասմարյան**

**Առաջատար հիմնարկ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ**

**Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. Մայիսի 15 -ին ժամը 14³⁰ ԵՊՃ –ում գործող
,, Երևանագիտության,, 005 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1**

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՃ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. Ապրիլի 15-ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
Վ. Ղուկասյան

Երևանք.հանք. գիտ. թեկնածու, դոցենտ

Մարատ Արիսի Գրիգորյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:доктор географических наук,профессор

Ашот Володяевич Хоецян

Официальные оппоненты: доктор географических наук, профессор

Овик Яхшибекович Саядян

кандидат географических наук

Шушаник Гургеновна Асмарян

Ведущая организация:Гюмрийский гос. педагогический институт им.М. Налбандяна

Защита состоится **15 мая 2015 г. в 14³⁰** на заседании Специализированного совета

005,,Науки о Земле,, при Ереванском государственном университете

Адрес: 0025, г. Ереван, ул. А. Манукяна, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан **15 апреля 2015 г.**

Ученый секретарь Специализированного совета

кандидат геолого-минералогич. наук, доцент

М. А. Григорян

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Լոռի - Փամբակի և Աղստեղավուշի տարածքների լեռնային բնույթը, բարդ երկրաբանական կառուցվածքը, խայտաբղետ ապարակազմությունը, տեղական տարբեր կլիմայական պայմանները, ռելիէֆի հարաբերական բարձրությունների գգալի տարբերություններն իրենց որոշակի ազդեցությունն են թողել լեռնային այս երկրահամակարգերի ձևավորման վրա:

Բնակչության բնական և մեխանիկական աճերն իրենց հերթին անհամամասնորեն ավելացրել են նաև մարդածին ծանրաբեռնվածությունը այդ տարածքների վրա, ել ավելի սրելով դրանց ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները: Տարերային աղետներից կախվածությունը այս երկրահամակարգերում շարունակում է մնալ բնակչության առավել խոցելի ու սուր խնդիրը:

Վերջին 15 տարիների ընթացքում, օրինակ, հանրապետության տարածքում տեղի են ունեցել մոտ 70 հզոր սելավներ: Միայն գետերի վարարումների պատճառով հանրապետության տնտեսությանը մեկ տարվա ընթացքում ընդհանուր հաշվով պատճառվել է 1 մլրդ.411 մլն.791 հազ. դրամի վնաս, որ կազմում է մոտ 3 մլն. ԱՄՆ դոլար: Միայն 2012 թ. կարկտահարության պատճառով 20 գյուղական համայնքներում ոչնչացել է գորենի, տարեկանի, կարտոֆիլի և այլ մշակաբույսերի բերքի պատճենը քան 70-80 %-ը:

Սեծ չափերի են հասնում նաև ծանրահակ երևույթների հետևանքով առաջացող վնասները: Ներկայումս հանրապետության տարածքի վրա տարբեր ակտիվությամբ գործում են ավելի քան 700 խոշոր սողանքային դաշտեր:

Դետագուտության օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը:

Օբյեկտ: Ոիսկային բացասական բազմաթիվ երևույթների հետազոտությունների և հնարավորին չափ դրանցից խուսափելու ու վնասակար հետևանքները նվազեցնելու համար որպես օբյեկտ ընտրվել է ՀՀ կարևոր նշանակություն ունեցող և իրարից տարբերվող երկու՝ Լոռի - Փամբակի և Աղստեղավուշի լեռնային բնատեխնաժին երկրահամակարգերը:

Առարկան: Բնական և տեխնածին ռիսկերի առաջացման, տարածման և հետևանքների հետազոտությունները Լոռի - Փամբակի (հիմնականում արդյունաբերական) և Աղստեղավուշի (հիմնականում գյուղատնտեսական) բնատեխնաժին երկրահամակարգերում:

Նպատակը: Լոռի - Փամբակի և Աղստեղավուշի օրինակով կանխատեսել լեռնային երկրահամակարգերի բնատեխնաժին ռիսկերի բնույթը, արտահայտման ձևերը, հետևանքները և մշակել դրանց կառավարման հնարավոր ուղիներ:

Խնդիրները: 1. Գոյություն ունեցող քարտեզագրական, տեքստային, վիճակագրական և այլ նյութերի հիմնա վրա կատարել հայեցակարգի մասնագիտական համապարփակ վերլուծություն, բացահայտել հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը ընդհանրապես և Լոռի-Փամբակ և Աղստեղավուշ բնատեխնաժին երկրահամակարգերում նաև ավորապես:

2. Դաշտային հետազոտությունների և տեղեկատվական նորագույն տեխնոլոգիական համակարգերի միջոցով կատարել հետազոտվող տարածաշրջանների բնական և սոցիալ-տնտեսական համալրների բաղադրամասային խոշորամասշտար հետազոտություններ՝ այդ տարածքների խոցելիության և նարդաժին ծանրաբեռնվածության առանձնահատկությունների, որպես ռիսկահարույց գործոնների բացահայտման համար:

3. Յուրաքանչյուր երկրահամակարգի տնտեսական օգտագործման ժամանակ առաջացող ռիսկերի բացահայտման, դրանց տարածածմանակային փոփոխությունների հետազոտման և գնահատման համար մշակել համապատասխան գիտա-մեթոդական սկզբունքներ և կիրառման ուղղություններ:

4. Հետազոտություններից ստացված առաջնային գիտատեղեկատվական նյութերի վերլուծության և դրանց մոդելավորմանը կազմել տարածաշրջաններում արտահայտվող ռիսկերի կառավարման խոշորամասշտար (1: 200000 մասշտարի) համադիրային ինժեներաաշխարհագրական քարտեզներ, մշակել դրանց մասնագիտական բովանդակության տարրերը և քարտեզագրական պատկերումների համապատասխան եղանակները:

5. Րիմճակլորել համադիրային քարտեզների գիտատեսական և պրագմատիկ նշանակությունը՝ հատկապես հաղորդակցության միջոցների, գյուղատնտեսական գործունեության կազմակերպման, շինարարական աշխատանքների և այլ կիրառական նպատամների համար:

Մեթոդարանություն: Աշխատանքն անհրաժեշտ գիտական մակարդակով կատարելու համար կիրառվել են բնական անկենդան և կենսածին օբյեկտների ու երևոյթների բացասական հետևանքների համապատասխան հետազոտությունների մեթոդներ, որոնք արտահայտվել են դաշտային դիտարկումների, վիճակագրական, տեքստույին և քարտեզագրական նյութերի համապարփակ վերլուծության և եզրահանգումների ձևերով:

Հետազոտությունների հուսալիությունը և ստացված գիտական արդյունքների հավաստիությունը: Ատենախոսության հիմնական դրույթները և ընդհանրացումները, ըստ էության, մշակվել են առաջին անգամ: Այդ տեսակետից՝ աշխատանքը պետք է համարել կառուցողական աշխարհագրության պրագմատիկ հաջողված փորձերից մեկը: Մեծ արժեք են ներկայացնում հատկապես պրագմատիկ ուղղավածությանը կատարված դաշտային գործիքային խոշորամասշտար հետազոտությունների գիտատեսական և գործնական-կիրառական արդյունքները:

Հետազոտությունների փորձաքննությունները և հրապարակումները :

Ներկայացված ատենախոսության գիտատեսական հիմնական դրույթները և ընդհանրացումները գեկուցվել և քննարկվել են Երևանի «Հայի հրուեներգոնախագիծ» ինստիտուտի տեխնիկական խորհրդում (1991թ.), ԵՊՀ(2007, 2008, 2010, 2011 թթ), ՀՊՄՀ (2007, 2008, 2010, 2011, 2012, 2013 և 2014 թթ), Գավառի պետական համալսարանի (2009 թ.), ԳՊՄԻ (2011 թ.) կազմակերպված

միջբուհական ու հանրապետական գիտա-գործնական նստաշրջաններում և կոնֆերանսներում:

Աստենախոսության թեմայով հրատարակվել է մեկ մենագրություն, **19** գիտական հոդված և թեզիս, որոնցից երեքը՝ արտերկրում:

Աշխատանքի գիտական նորույթը:

- Համալիրային մեթոդներով հետազոտվել խոշոր մասշտաբներով (1:100000 և 1:200000) քարտեզագրվել են Աղստև-Տավուշի և Լոռի-Փամբակի բնատեխնաժին երկրահամակարգերի ժամանակակից արտաժին ռելիեֆառաջացնող գործընթացներն ու սոցիալ-տնտեսական կարևոր ռիսկահարույց գործոնները,
- Բացահայտվել են լեռնային բնատեխնաժին երկրահամակարգերում արտահայտվող բնական և տեխնաժին ռիսկերի բնույթը, ծագումնաբանական տիպերը, արտահայտման ժամանակակից ծևերը և դրանց բացասական հետևանքները,
- Լոռի-Փամբակի և Աղստև-Տավուշի լեռնային բնատեխնաժին գեոհամակարգերի օրինակով մշակվել են բնական և տեխնաժին ռիսկերի կարգաբանման և գնահատման չափորոշիչները, դրանց գիտատեսական ու մեթոդաբանական սկզբունքները և կիրառական նշանակությունը,
- Մշակվել են բնատեխնաժին ռիսկերի խոշորամասշտար ինժեներաաշխարհագրական համադիրային քարտեզների մասնագիտական բովանդակության տարրերը, դրանց քարտեզագրական պատկերումների եղանակները: Կազմվել են Աղստև-Տավուշի և Լոռի-Փամբակի տարածաշրջաններում արտահայտվող բնական և տեխնաժին ռիսկերի 1:200 000 մասշտարի ինժեներաաշխարհագրական համադիրային քարտեզները:
- Մշակվել են ռիսկերի կառավարման հնարավոր տարրերակների գրաֆիկական եղանակները, իիմնավորվել դրանց արտահայտման համապատասխան ծևերը և գործնական կիրառման ոլորտները:

Հետազոտությունների գիտատեսական և գործնական-կիրառական նշանակությունը:

Հանրապետության տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող Լոռի-Փամբակի, և Աղստև - Տավուշի տարածշրջանների համար կազմված 1:200000 մասշտարի ռիսկերի կառավարման քարտեզները նախատեսված են բնական ռեսուրսների նվազագույն վճասներով օգտագործման համար: Դրանք կարող են հուսալի հիմք հանդիսանալ նաև այս համակարգերում գյուղատնտեսական աշխատանքների, արդյունաբերական օբյեկտների տեղաբաշխման, ինչպես նաև հողաբարելավման և բնապահպանական միջոցառումների նպատակալաց կազմակերպման և իրականացման համար:

Պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները.

1. Բնական հետազոտությունների, տեքստային, քարտեզագրական, վիճակագրական նյութերի միջոցով կատարվել է հայեցակարգի մասնագիտական համապարփակ վերլուծություն, փաստագրվել իիմնախնդրի ուսումնասիրվածության ժամանակակից վիճակը ՀՀ-ում ընդհանրապես, և հետազոտվող

Երկրահամակարգերում մասնավորապես:

2. Նորագույն տեխնոլոգիական համակարգերի կիրառմամբ բացահայտվել են հետազոտվող Երկրահամակարգերում բնական և սոցիալ-տնտեսական բաղադրամասերի փոխներգործության ժամանակակից վիճակը, դրանցում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների հետևանքով առաջացող ռիսկային երևույթները:
3. Անալիտիկ քարտեզագրման եղանակով բացահայտվել են հետազոտվող Երկրահամակարգերի ռելիեֆի քանակական բնութագրիչները, ժամանակակից ռելիեֆառաջացնող գործընթացները, մարդագին ծանրաբեռնվածության աստիճանները, ինչպես նաև բնակչության տնտեսական գործունեության հիմնական ծևերն ու ոլորտները:
4. Բացահայտվել ու հիմնավորվել են լեռնային բնատեխնաժին Երկրահամակարգերում արտահայտվող ռիսկերի բնույթը, գնահատման մեթոդական սկզբունքները և չափորոշիչները, դրանց բացասական հետևանքները:
5. Մշակվել են լեռնային բնատեխնաժին Երկրահամակարգերում արտահայտվող ռիսկերի ինժեներաաշխարհագրական խոշորամասշտար ($1:200000$) համադիրային (սինթետիկ) քարտեզների մասնագիտական բովանդակության տարրերը, դրանց քարտեզագրական պատկերումների եղանակներն ու ծևավորման սկզբունքները:

ԱՍԵՆՆԱԽՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱՃՐՅ.


Աշխատանքը կազմված է նախաբանից, չորս գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Տեքստային մասը բաղկացած է 150 համակարգչային էջից: Աշխատանքի մեջ ներկայացված են նաև սխեմատիկ քարտեզներ, դիագրամներ, աղյուսակներ, ինչպես նաև բնական և մարդագին ռիսկերի կառավարման $1:200000$ մասշտարի համադիրային երկու առանձին քարտեզներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԱՀԱՐԴ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախաբանում շարադրված են ատենախոտության թեմայի արդիականությունը, նպատակները, առարկան, հետազոտությունների մեթոդական առանձնահատկությունները, գործնական-կիրառական նշանակությունը, փորձաքննության արդյունքները, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ինչպես նաև Լոռի-Փամբակի և Աղստև-Տավուշի տարածաշրջանների հետազոտությունների քարտեզագրական, վիճակագրական, տեքստային (գրական), ֆոնդային և այլ նյութերի մասնագիտական համապարփակ վերլուծության արդյունքները:

Առաջին «Լոռի-Փամբակ և Աղստև-Տավուչ բնատեխնաժին Երկրահամակարգերի տնտեսական օգտագործման ռիսկահարույց հիմնական գործուները» գլուխը նվիրված է տարածաշրջանների ֆիզիկաշխարհագրական ժամանակակից պայմանների ընդհանուր վերլուծությանը: Դաշտային հետազոտությունները ցույց տվեցին, որ չնայած Լոռի-Փամբակը և Աղստև-Տավուչի տարածաշրջաններն ունեն

ֆիզիկաաշխարհագրական որոշակի ընդհանրություն, սակայն երկրաբանական, հատկապես ապարակազմական, հողային, բուսականության, տարածքների տնտեսական օգտագործման մասնագիտացման տեսակետից զգալի տարբերվում են (տես Ակ.1.,2): Մեծ է տարբերությունը նաև ընդերքի հարստությունների տեսակետից, ինչը պայմանավորել է նաև այս տարածաշրջանների տնտեսության կազմակերպման հիմնական ուղղությունները՝ արդյունաբերական Լոռի-Փամբակ և զյուղատնեսական Աղստև-Տավուշ բնատեխնածին երկրահանակարգեր: Բնական հետազոտությունները ցույց տվեցին, որ զգալի տարբերություններ կան նաև կենսածին համալիրների միջև՝ մարդածին ավելի մեծ ծանրաբեռնված Լոռի-Փամբակ և համեմատաբար նոր բնակեցված՝ Աղստև-Տավուշ տարածաշրջաններ:




Նկ. 1. Լոռի-Փամբակ տարածաշրջանի լեռնագրական սխեմատիկ քարտեզ

Երկրորդ «Հետազոտվող տարածաշրջանների տնտեսական յուրացվածության ժամանակակից վիճակը, բնական և մարդածին ռիսկերի հետազոտությունների մեթոդները» գլխում հետազոտվել են երկու փոխկապակցված հիմնահարցեր:

1. Տարածաշրջանների բնական բաղադրիչների բաղադրամասային դաշտային և կամերային հետազոտություններ,


2. Սոցիալ-տնտեսական բաղադրիչների բնական հետազոտությունները, դրանց ժամանակակից վիճակի վերլուծություն:
- Այս ամենը դիտարկվել են որպես ռիսկահարույց հիմնական գործոններ (տես նկ. 1,2, 3):



Նկ. 2. Աղստև-Տավուշ տարածաշրջանի լեռնագրական սխեմատիկ քարտեզ

Ոելիեֆի լեռնային բնույթը, դրա ձևաչափական և ծագումնաբանական առանձնահատկությունները, ապարակազմությունը, կլիմայական և ջրա-ջերմային

պայմանները միանշանակ չեն ազդել Լոռի-Փամբակի և Աղստև-Տավուշի բնական ռեսուրսների տնտեսական օգտագործման ռիսկերի առաջացման վրա:



Նկ. 3. Աղստև-Տավուշ տարածաշրջանի գյուղատնտեսական հողահանդակների սխեմատիկ քարտեզ

Ակնհայտ է, որ լեռնային տարածքների տնտեսական յուրացումը միշտ էլ ուղեկցվում է տարբեր բնույթի և հզորությամբ արտահայտվող ռիսկերով: Սակայն բազմաթիվ նախագծերի տեխնիկատնտեսական հիմնավորումների ժամանակ քիչ, կամ բոլորովին հաշվի չեն առնվել նման երկրահանակարգերի լանդշաֆտային անկենդան և կենսածին (սոցիալ-տնտեսական) բաղադրամասերի տեղական առանձնահատկությունները, դրանց փոխկապակցվածության հետևանքով պայմանավորված սպասվելիք փոփոխությունները և բացասական հետևանքները:

Եթե մինչ այժմ աշխարհագրական հետազոտությունները ՀՀ սահմանափակվել են առավելապես ոչ մեծ տեղամասերում և ուղեկցվել այդ տարածքների տարբեր մասշտաբներով քարտեզագրմամբ, ապա ներկայումս կտրուկ աճել են դրանց ներկայացվող պահանջները:

Օրեօր ավելանում են նաև այդ նախագծերին ներկայացվող պահանջները՝ նշանակալից չափով մեծացնելով դրանց գնահատման և կանխատեսման համար կազմվող քարտեզների, այսինքն գրաֆիկական հիմնավորումների անհրաժեշտությունը: Այս խնդիրներն են հիմնականում կազմել մեր աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխի մեջ քննարկվող հիմնական հարցերը:

Սոցիալ-տնտեսական բաղադրիչների բնական դիտարկումները, դրանց ժամանակակից վիճակի վերլուծությունը և գնահատումը շարադրված են նույն գլխի երկրորդ ենթագլխում:

Բնական ռեսուրսների անվտանգ օգտագործման հիմնախնդիրները գիտատեխնիկական առաջընթացից ժամանակակից պայմաններում առկա են նաև Լոռի-Փամբակ և Աղստե-Տավուշ տարածաշրջաններում, որտեղ լեռնային բարդ ռելիեֆի ա պատճառով դրանք կապված են ոչ միայն ավելի ու ավելի ակտիվացող բնական պրոցեսների և երևույթների, այլ նաև անընդհատ աճող մարդագին բացասական գործընթացների հետ:

Կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ աշխարհագրական, գեոմորֆոլոգիական, երկրաբանական, քարտեզագրական հետազոտությունների համալիրային մեթոդներից նպատակահարմար է կիրառել ծևագրական (մորֆոգրաֆիական), ծևաչափական (մորֆոմետրիկական), ծևաբանական-համենատական (մորֆոլոգիական-համենատական), քարտեզագրական (դաշտային և կամերային) և վիճակագրական-համենատական վերլուծությունների մեթոդները:

Երրորդ «Բնատեխնածին երկրահանակարգերի տարածքների տնտեսական օգտագործման ռիսկերի բնական և մարդագին նախադրյալները» գլխում շարադրված են ներծին և արտածին, այդ թվում նաև մարդագին գործոնների միջոցով հրահրվող ռիսկերի բնույթի, արտահայտման ծևերի և դրանց տարածման օրինաչափությունների հետազոտությունների հիմնական արդյունքները:

Դաշտային հետազոտությունները ցույց տվեցին, որ Լոռի-Փամբակի և Աղստե-Տավուշի տարածքների տնտեսական օգտագործման ժամանակակից ծևերը զգալի տարրերվում են: Մեծ տարբերություններ կան նաև այդ գործոնների միջոցով հրահրվող ռիսկերի բնույթի, վտանգավորության և պատճառած վնասների չափերի

միջև: Այդ երկրահամակարգերում բազմաթիվ ռիսկեր կապված են հատկապես նորագույն տեկուննական շարժումների հետևանքով առաջացող ժամանակակից սեյսմիկ և ծանրահակ երևույթների հետ: Երկու տարածաշրջաններն ել ընկած լինելով Ալպ-Հիմալայան գեոսիմկլինալային զոնայի ակտիվ հատվածներում, առանձնակի մեծ է պարբերաբար կրկնվող տարբեր մագնիտուդաների ավերիչ երկրաշարժերի հավանականությունը: Իսկ ջրային օբյեկտների միջոցով հրահրվող ռիսկերը առավել զգալի են Փամբակ, Ղերեդ, Գետիկ, Աղստև գետերի հովիտներում: Մակերևույթային ջրերի էրոզիոն աշխատանքի արդյունք են նաև հովտաձորակային ցանցի ակտիվ զարգացումները: Այդ տեսակետից առավել խոցելի են հատկապես դեյտվիալ-պողոսուվիալ, կուտակումային ընդարձակ լեռնալանջերը և միջլեռնային գոգավորությունների հատակային տեղամասերը:

Տարածաշրջաններում առանձնակի մեծ բնական ռիսկեր են նաև տարբեր բնույթով, ակտիվությամբ և հզորությամբ արտահայտվող սելավային երևույթները: Ակտիվ գործող սելավային հոսքերն այստեղ կարգաբանվում են չորս հիմնական՝ **ջրաքարային** (Տաշիրի), **ջրաքարախճային** (Ուռուտ, Կողես, Լեջան), **խճացեխային** (Յախում, Տավուշ), **ցեխային** (Լուսաղբյուր) տիպերի:

Հետազոտվող երկրահամակարգերում բնակչության տնտեսական գործունեության վրա ուղղակի ազդեցություն ունեցող գործուններից է նաև հողի էրոզիան, որն այստեղ կատարվում է երկու հիմնական ձևով.

1. լեռնալանջերի մակերևույթային լվացման և քամահարման,

2. գծային լվացման, այսինքն գետային խորքային էրոզիայի միջոցով:

Լոդի-Փամբակ և Աղստև-Տավուշ տարածաշրջաններում բազմազան է նաև **ծանրահակ** երևույթների ռիսկային նախադրյալները, որոնք այստեղ արտահայտվում են **ստղամբմերի**, **դեֆյուլկշիայի**, **փլուզումների**, **քարաքաղումների**, **սոլիֆյուլկշիայի**, **հողագրունտի նատեցումների**, **սուֆֆոզիոն** և այլ բացասական երևույթները: Բոլոր այդ բացասական երևույթների արտահայտման բնույթը, հզորությունները, դրանց տարածնան հիմնական շրջանները շարադրված են սույն գլխի ենթագլուխներում և պատկերված ինժեներաշխարհագրական համադիրային խոշորամասշտար քարտեզի վրա:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ մարդածին ռիսկերն այս երկու գետահամակարգերի յուրացված և նոր յուրացվող տարածքներում արտահայտվում են նույնապես տարբեր բնույթով, տևողությամբ և չափամիջներով (պարամետրերով):

Մարդածին ռիսկերն այստեղ արտահայտվում են ինչպես **մշտական**, այնպես էլ **ժամանակավոր** բնույթով, որոնք, որպես կանոն, կապված են տվյալ տարածաշրջանների բնակչության տնտեսական գործունեության ձևերի հետ:

Դաշտի առնելով կատարված մեր հետազոտությունների գիտատեսական հիմնական ընդհանրացումները՝ նպատակահարմար ենք համարում լեռնային բնատեխնածին երկրահամակարգերում մարդածին ռիսկերի հետազոտություններն իրականացնել առնվազն երկու փուլերով:

1. Նախագծերի տեխնիկա-տնտեսական, բնապահպանական և էկոլոգիական

հիմնավորումների ժամանակ,

2. Նախագծվող միջոցառումների իրականացման և շինարարական աշխատանքների ավարտից հետո, այսինքն նաև դրանց հետագա շահագործման ընթացքում:

Դամոզված ենք, որ միայն այս ձևով հնարավոր կլինի ճիշտ կանխատեսել և հնարավորինս ճիշտ կառավարել տվյալ տարածքում արտահայտվող մարդաժին ռիսկերը:

Չորրորդ «Բնական և մարդաժին ռիսկերի ճարտարագիտա-աշխարհագրական կամխատեսման և կառավարման հիմնախնդիրները» գլխում շարադրված են.

1. Լեռնային բնատեխնածին երկրահամակարգերի ռիսկերի գնահատման չափորոշիչները:
2. Ոիսկերի կանխատեսման և կառավարման ու դրանց քարտեզագրական հիմնավորումների հնարավոր տարրերակների մշակման արդյունքները:

Բնական և տեխնածին ռիսկերից տեղի բնակչության կախվածությունը, ինչպես արդեն նշել ենք, շարունակում է մնալ կարևոր հիմնահարցերից մեկը: Առավել մտահոգիչ է այն, որ տարրեր ծագման ռիսկերի պատճառած նյութական և սոցիալական վնասները այստեղ աճում են ու հաճախ դառնում նաև անկառավարելի: Ակներև է, որ լեռնային համակարգերում դրանք ունեն իրենց առաջացման ինչպես բնական (օբյեկտիվ), այնպես էլ տեխնածին (սուբյեկտիվ) գործոնները, որոնք և պայմանավորում են տվյալ երկրահամակարգի, տվյալ ժամանակահատվածում, տվյալ տիպի ռիսկը հրահրող գործոնի բնույթը ու առաջացրած բացասական հետևանքները: Դաշվի առնելով այդ հանգամանքը՝ հետազոտությունների ընթացքում նենք փորձել ենք բացահայտել հետազոտվող տարածաշրջաններում ներկայում արտահայտվող ռիսկերի բնույթը ու աշխարհագրական տարածման օրինաչափությունները, դրանց հավանական հզորությունները, որից հետո միայն կանխատեսել սպասվելիք բացասական հետևանքները: Իրականացված հետազոտությունների ժամանակ պարզվեց, որ անհրաժեշտ է տարրերակել նաև ռիսկերի հետևյալ հիմնական ֆիզիկաաշխարհագրական, գեոնորֆոլոգիական, էկոլոգիական, ռազմական, տնտեսական (ագրոտիմ և տեխնածին) տիպերը: Այս նպատակով ռիսկերի կարգաբանման ժամանակ շատ ավելի կարևոր է առանձնացնել նաև դրանց. 1. Վերացվող, 2. մասնակի վերացվող, 3. չվերացվող, այսինքն մշտական արտահայտվող տիպերը:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ այս երկրահամակարգերում արտահայտվող ռիսկերի մեջ մասը բնութագրվում են որպես չվերացվող: Հետևաբար, բոլոր տիպի ռիսկերի բացասական ազդեցությունները տվյալ երկրահամակարգերում, տվյալ ժամանակահատվածում, տվյալ ռիսկի սկասվելիք հետևանքները կարող են արտահայտվել երեք հիմնական առանձնահատկություններով.

1. Հիմնականում քայլայող և ոչնչացնող (քարայրական) ռիսկերի ձևով, որոնք քայլայում, հիմնովին ոչնչացնում են իրենց արտահայտման միջավայրում գտնվող բոլոր օբյեկտները, առաջացնում էկոլոգիական լուրջ խնդիրներ,

2. Կաթվածահարող (պարալիզիրյացի), բնական ռեսուրսները հյուծող և սպառողական (истощающие) հատկության ռիսկեր,
3. **Տեխնոլոգիական և բնատեխնածին** խոշոր վթարմներ (природно-технические катастрофы) առաջացնող ռիսկեր¹

Ինչպես երևում է, սրանք բոլորն էլ ունեն արտահայտման համամոլորակային բնույթ: Սակայն դրանցից յուրաքանչյուրը տարբեր հզորությամբ կարող է արտահայտվել տարբեր տարածաշրջաններում ձևավորված, տարբեր բնատեխնոծին երկրահամակարգերի տարբեր տեղամասներում:


Բոլոր տիպի ռիսկերի կանխատեսման և կառավարման համար, մեր կարծիքով, առաջին հերթին, անհրաժեշտ է նաև յուրաքանչյուր երկրահամակարգում արտահայտվող նրանց ինտենսիվության և ազդեցության ոլորտների սահմանների ճշգրտումը և հստակեցումը: Յետազոտությունները ցույց տվեցին, որ ռիսկերի կառավարման հնարավոր միջոցները կարելի է բաժանել մի քանի բլոկների: Սակայն նպատակահարմար պետք է համարել երեք հիմնական բլոկների առանձնացումը.

1. Վտանգավոր պրոցեսների կառավարում,
 2. տնտեսական գործունեության բարելավում,
 3. կազմակերպչական միջոցառումների իրականացում (տես նկ. 5):
- Ըստ իրականացման կոնկրետ բնույթի դրանք կարելի է խմբավորել նույնական երեք ձևերի մեջ.
1. ուղղակի,
 2. անուղղակի,
 3. կազմակերպչական (տես նկ. 4):

Ինչպես երևում է, այդ գործառույթների ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել

1. ռիսկերի վտանգավորության դրսնորման հավանականության,
 2. էկոլոգա-բնապահպանական և սոցիալ-տնտեսական վճարման առաջացնելու կամ չառաջացնելու վրա:
- Միայն այս երկու բաղադրամասների վերլուծության միջոցով է, որ հնարավոր է դառնում իրականացնել բնական և մարդածին ռիսկերի կանխատեսման և կառավարման նախագծերի մշակման ճշգրիտ աշխատանքները:


¹ Ռիսկերի նման դասակարգման, բնակչության կողմից դրանց արձագանքման հնարավոր սխեմայի և կառավարման տարրերակմների մշակման ժամանակ օգտվել եմք նաև Ս. Ս. Մյազկովի կողմից մշակված մեթոդիկայից (С. М. Мязков, География природного риска, Москва, МГУ, 1995)



Նկ. 4. Ոիսկերի կառավարման հնարավոր տարրերակի սխեմա

Բնատեխնածին, հատկապես ճարդածին ոիսկերի կանխատեսման և կառավարման նախագծերի մշակման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել, նաև ինչպես այդ հիմնախնդիրների վերաբերյալ լեռնային տարածաշրջանների բնակչության իրազեկվածության, այնպես էլ տվյալ երկրահամակարգի բնակչության էրոնմշակութային առանձնահատկությունների վրա: Մեր կարծիքով հետազոտական աշխատանքների այդ փուլը նպատակահարմար է իրականացնել նկ.5 սխեմայում արտահայտված հաջորդականությամբ:

Բնակչության կողմից ոխսկերի
արձագանքման հնարավոր սխեմա



Եզրակացություններ և առաջարկություններ

1. Յետազոտվող տարածաշրջաններն ունեն բացարիկ նշանակություն ՀՀ տնտեսության կազմակերպման, արտադրական կարողությունների տարածքային տեղաբաշխման և զարգացման համար: Սակայն բնապահպանական և էկոլոգիական տեսակետից ներկայունս դրանք համարվում են առավել խոցելի բնատեխնաժին երկրամակարգեր:
 2. Կատարվել է հայեցակարգի մասնագիտական համապարփակ վերլուծություն, և արդյունքում փաստագրվել է՝
 - դաշտային դիտարկումների և խոշորամասշտար քարտեզագրման միջոցով բացահայտել են լեռնային բնատեխնաժին երկրամակարգերի մակերևույթի ծագումնաբանական, ապարակազմական, ձևագրական հիմնական տիպերը, ժամանակակից արտածին բնական և մարդածին բացասական պրոցեսները՝ որպես ռիսկահարույց հիմնական գործոնների և կազմել դրանց անալիտիկ քարտեզները:
 - կազմվել են տարածաշրջաններում արտահայտվող ռիսկերի փաստագրական (անալիտիկ) և համարդիտային (ախնչետիկ) խոշորամասշտար քարտեզներ, որպես կառուցողական աշխարհագրության պրագմատիկ բաղադրանասեր:
 3. Բացահայտել են տարածաշրջանների բնական և սոցիալ-տնտեսական բաղադրանասերի փոխապակցվածությունը, երկրահամակարգերի տարածքների խոցելիության բնույթը, չափերը կախված դրանց ֆիզիկաաշխարհագրական տեղական պայմաններից, այլ նաև գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական բաղադրիչների որակական տարրերություններից ու նարդածին ծանրաբեռնվածության աստիճաններից: Լոռի-Փամբակում տիրապետում են տեխնաժին, իսկ Աղստև-Տավուշում հիմնականում ազդուժին ռիսկային գործոններ: Երկու համակարգերում էլ ներկայում դիտվում է ռիսկերի տարասեռության ավելացում և դրանց վտանգավորության աստիճանների մեծացման միտումներ:
 4. Դաշտային դիտարկումների միջոցով քարտեզագրել է ռիսկերի արտահայտման հիմնական տիպերը և արեալները, հատուկ ուշադրություն է դարձվել գնահատման չափորոշիչների ճշգրիտ մշակման և օգտագործման վրա:
 5. Լեռնային երկրահամակարգերի, տարրեր աստիճաններով արտահայտվող խոցելիությունը, բնութագրվել է առաջին հերթին տեղեկատվության քանակի ստեղծմամբ, սուբյեկտի կողմից դրանց արտացոլման և պատասխան ռեակցիայի մշակման ու գրաֆիկական ձևով արտահայտմամբ:
- Յետազոտվող երկրահամակարգերում արտահայտվող բոլոր տիպի ռիսկերն դասակարգվել են 3 հիմնական խմբերի մեջ.
- ա/ քայլայո, հիմնովին ոչնչացնող,
թ/ կաթվածահարող և սպառողական,
զ/ տեխնոլոգիական և բնատեխնաժին վթարմեր առաջացնող:

6. Ոիսկերի կառավարման գործընթացները պետք է արտահայտվեն երկու հիմնական բլոկներով.
- ա/ ոիսկերի վտանգավոր դրսկորումների հավանականության բացահայտման, դրանց բնապահպանական ու սոցիալտնտեսական վնասների մասին բնակչությանը իրազեկման,
- բ/ ոիսկերի վտանգավորության գիտականորեն հիմնավորված գրաֆիկական արտահայտմար:

Առաջարկություններ

1. Լեռնային բնատեխնածին երկրահամակարգերի հետազոտությունների և դրանց տնտեսական օգտագործման ոիսկերի նվազեցման նախագծերի հիմնավորման ժամանակ՝ փորձաքննական բաղադրիչը ընդունել որպես պարտադիր բաղադրամաս:
2. Բնական և նարդածին ռիսկերի կառավարման գործառույթները պրագմատիկ դարձնելու համար հետազոտությունների արդյունքները, շահագրգիռ կազմակերպություններին, ներկայացնել ինչպես տեքստային շարադրանքի, այնպես էլ գրաֆիկական տեսքով, կազմելով դրանց համար խոշորամասշտար ինժեներաաշխարհագրական համադիրային քարտեզներ:
3. Մարդածին ռիսկերի հիմնավորված գնահատման և կառավարման համար նպատակահարմար է դրանց հետազոտությունները իրականացնել երկու փուլով՝
 - նախագծերի տեխնիկատնտեսական նախնական հիմնավորումների ժամանակ,
 - նախագծերի իրականացումից հետո, դրանց շահագրծման ժամանակ:

Ասեմախոտության թեմայով իրատարակված աշխատամքների ցանկ

1. **Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** Կառուցողական (կոնստրուկտիվ) աշխարհագրության պրագմատիկ առանձնահատկությունները ՀՀ ԳԱԱ տեղեկագիր Գիտ.Երկրի մասին, Երևան, 2006, LIX, N 3, էջ 56-58
2. **Կարապետյան Ա. Գ.** Լեռնային տարածքի տնտեսական օգտագործման ժամանակ ագրոծին գործոնների ազդեցության կանխատեսման առանձնահատկությունները. Յ ս. Պрикладные вопросы географии и геологии горных областей Алеппийско-Гималайского пояса, Ереван, 2007, с. 408-413
3. **Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** ՀՀ Լեռնային տարածքի տնտեսական օգտագործման ռիսկի գնահատման և կանխատեսման հիմնախնդիրները. Գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում: Հ.Աճառյանի անվ.համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007թ., էջ 337-344
4. **Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** К методике прогнозирования влияния строительства и эксплуатации крупных гидротехнических сооружений на

- изменение прилегающих территорий.(на примере басс. р. Дзорагет РА) Вестник БГУ, Химия, биология, география, серия 2, Минск, 2007, с. 127-131
5. **Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** Կառուցողական (կոմստրուկտիվ) աշխարհագրական հետազոտությունների գիտարտադրական հիմնական ուղղությունները. նպատակները և կիրառական ոլորտները, ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, Բնական գիտություններ, թիվ (1-2), (5-6), Երևան, 2007, էջ 10-18
 6. **Կարապետյան Ա. Գ.** Լեռնային ռելիեֆի ինժեներաաշխարհագրական գնահատման և քարտեզագրման առանձնահատկությունները, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, Բնական գիտություններ, թիվ (1-2), (5-6), Երևան, 2007թ., էջ 24-28
 7. **Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** Об опыте исследования и картографирования степени антропогенных воздействий на экологию крупных горных долин .(на примере долины р. Агстев РА) Вестник МАНЭБ, том 12, № 4 вып.2 С.Петербург, 2007, с. 23-26
 8. **Կարապետյան Ա. Գ.** Տեխնածին բացասական գործընթացների ազդեցության դրսևորմանները լեռնային տարածքները շինարարական նպատակներով օգտագործելիս ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, LIX, հ. 2. 2008, էջ 57-60
 9. **Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** Географические аспекты прошлых, настоящих и будущих проблем озера Севан и Севанского бассейна, Вестник МАНЭБ том 14, № 4 вып.2 2009, С.Петербург 2009, с. 30-36.
 10. **Կարապետյան Ա. Գ.** Լեռնային բնատարածքների ժամանակակից փոփոխությունների պրագմատիկ աշխարհագրական հետազոտությունների առանձնահատկությունները (Աղստև-Տավուշ տարածաշրջանի օրինակով) Խ.Աբրվյանի ծննդյան 200 ամյակին նվիրված գիտ. ժող. նյութեր, հ. 3, Երևան, 2010, էջ 118-121
 11. **Կարապետյան Ա. Գ.** Աղստևի ավազանի մակերևույթի ժամանակակից փոփոխությունների կանխատեսման մի քանի ասաեկտմեր,(Դիլիջանի միջլեռնային գոգավորության օրինակով) Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և գործնական կիրառումը, ԵՊՀ , Երևան 2011, էջ 203-206
 12. **Կարապետյան Ա. Գ.** Մարդածին ռիսկերի առաջացման նախադրյալները, դրանց բնույթը և հետազոտությունների մեթոդները (Լոռի-Փանբակի բնատեխնածին գեոհանակարգերի օրինակով) ՀՅ անկախության 20 ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի 2012, էջ 127-136
 13. **Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** Բնական ռիսկերի բնույթը, առաջացման նախադրյալները և արտահայտման ձևերը բնատեխնածին գեոհանակարգերի տարածքների տնտեսական յուրացման գործընթացում ՀՅ անկախության 20 ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի 2012, էջ 136-141

- 14. Կարապետյան Ա. Գ.** Բնական և մարդածին ռիսկերի կառավարման քարտեզագրական հիմնավորումների մեթոդները լեռնային բնատեխնածին գեղիամակարգերում Լեռնային տարածաշրջանները (գեղիամակարգերը) որպես բնակության էքստրեմալ միջավայր ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտա-գործնական նյութեր 20 դեկտեմբեր 2012, (1-ին ժողովածու) Երևան, 2013, էջ 85-96
- 15. Կարապետյան Ա. Գ., Խոյեցյան Ա. Վ.** Լեռնային գեղիամակարգերի ռիսկերի գնահատման չափորոշիչները և ձևերը «Լեռնային տարածաշրջանները (գեղիամակարգերը) որպես բնակության էքստրեմալ միջավայր Միջքուհական գիտագործնական նստաշրջանի նյութեր, 22 ապրիլի 2013, (2-րդ ժողովածու) Երևան, 2013, էջ 67-86
- 16. Խոյեցյան Ա. Վ., Խաչատրյան Ա. Ժ., Կարապետյան Ա. Գ.** Լանդշաֆտային պլանավորման սկզբունքները լեռնային գեղիամակարգերում, Լեռնային տարածաշրջանները (գեղիամակարգերը) որպես բնակության էքստրեմալ միջավայր Միջքուհական գիտա-գործնական նստաշրջանի նյութեր, 22 ապրիլի 2013թ. (2-րդ ժողովածու) Երևան, 2013, էջ 31-46
- 17. Կարապետյան Ա. Գ., Կարապետյան Գ. Մ.** Լեռնային տարածաշրջանների տնտեսական օգտագործման ռիսկերի կառավարման հիմնախնդիրները (ՀՀ Լոռվա և Տավուշի տարածաշրջանների օրինակով), Սենագրություն Լիմուշ հրատ. Երևան, 2013, 156. էջ
- 18. Կարապետյան Ա. Գ.** Բնական և մարդածին ռիսկերի քարտեզների բովանդակության տարրերը և դրանց պատկերնան առանձնահատկությունները, Աշխարհագրական պրագմատիկ հետազոտությունների հիմնական միտումները մոտ ապագայում, Յանրապետական գիտագործնական նստաշրջանի նյութեր, 31 մարտի 2014 (Երրորդ ժողովածու), Երևան 2014, էջ 127-142
- 19. Կարապետյան Գ. Մ., Կարապետյան Ա. Գ.** Լեռնային գեղիամակարգերում տնտեսական գործունեության ռիսկերի կառավարման քարտեզագրական հիմնավորումները, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 90 ամյակին նվիրված նյութեր, 3-րդ պրակ, Երևան, 2014, էջ 188-192,

АРТУР ГЕВОРКОВИЧ КАРАПЕТЯН
ПРОГНОЗИРОВАНИЕ И УПРАВЛЕНИЕ ПРИРОДНО-ТЕХНОГЕННЫХ
РИСКОВ ГОРНЫХ ГЕОСИСТЕМ
(НА ПРИМЕРЕ РЕГИОНОВ ЛОРИ-ПАМБАК И АГСТЕВ-ТАВУШ)

РЕЗЮМЕ

Актуальность темы. Сложность физико-географических условий, геологического строения, литологического состава пород, особенности рельефа, специализация сельскохозяйственного производства в определенной степени обуславливают возникновение, активность и характер проявления, а так же географическое распространение многих опасных природных и антропогенных рисков. В процессе необоснованного использования в хозяйственных целях территории Лори-Памбака и Агстев-Тавуша нарушается общий баланс природных и социально-экономических компонентов этих геосистем. Все это приводит и к нарушению естественного равновесия гидрологических, гравитационных и других условий этих территорий, следовательно, и активизации селевых, оползневых, водно-эрозионных и других природно-антропогенных рисков.

Целью диссертации является исследование, оценка, прогнозирование и разработка путей управления природными и антропогенными рисками в горных природно-техногенных геосистемах Лори-Памбака и Агстев-Тавуша РА. В качестве основных методов исследований применены полевые инструментальные, картографические, геоморфологические, морфометрические, а так же методы статистического анализа по выявлению, оценки, прогнозированию и управлению природными и антропогенными рисками. По результатам этих исследований разработать специальное содержание и принципы оформления крупномасштабных синтетических инженерно-географических карт управления исследуемых геосистем.

Научная новизна работы.

1. Комплексными методами впервые в двух природно-техногенных горных геосистемах исследован весь комплекс природных и социально-экономических систем, обуславливающих проявление современных природных и антропогенных рисков и их распространение в геосистемах Лори-Памбака и Агстев-Тавуша.
2. Разработана и в практике применена методика по исследованию сущности, характера проявления, активность и географического распространения природных и антропогенных рисков в двух обширных и резко отличающихся геосистемах РА.
3. Разработаны принципы и методика классификации, критерии показателей оценки природных и антропогенных рисков, а так же их прогнозирования и управления.
4. Разработана и в практике применена методика по составлению и оформлению синтетических крупномасштабных инженерно-географических карт природных и антропогенных рисков Лори-Памбака и Агстев-Тавуша.
20. Разработаны принципы графического метода представления вариантов и управления природными и антропогенными рисками в горных геосистемах. Подобный метод

обеспечивает практическое применение научных результатов исследований по оптимальному землепользованию горных территорий.

Результаты научных исследований обобщены в следующих основных выводах:

1. Исследуемые геосистемы Лори-Памбак и Агстев-Тавуш имеют определенное значение в организации и развитии экономики РА, т.к. обладают значительными природными богатствами и трудовыми ресурсами. Вместе с тем, эти геосистемы наиболее уязвимы к природно-антропогенным нагрузкам и рискам.
2. Из-за необоснованного использования территории, в настоящее время, наблюдается активизация многих природных и антропогенных рисков, усиливающих напряжение развития селевых, оползневых, водно-эрозионных и других негативных процессов, наносящих значительный ущерб этих территорий.
3. С целью уменьшения отрицательных воздействий нежелательных рисков при хозяйственном использовании территории необходимо всестороннее и детальное исследование всего комплекса компонентов природных и социально-экономических геосистем, а так же разработка наиболее приемлемых путей их управления.
4. Исследованы и установлены сущность, характер, географическое распространение и опасность рисков в данных территориях.
5. Для прогнозирования и управления целесообразна разработка спецсодержания и составление синтетических крупномасштабных инженерно-географических карт природных и антропогенных рисков Лори-Памбака и Агстев-Тавуша. Графическое изображение результатов исследований дает полное представление об их распространении и облегчает применение этих карт для решения прагматических проблем, связанных с оптимизацией использования территории в хозяйственных целях без особых рисков.

ARTUR KARAPETYAN
**PREDICTION AND MANAGEMENT OF NATURAL AND TECHNOLOGICAL
HAZARDS OF MOUNTAINOUS GEOSYSTEMS (ON THE EXAMPLE OF LORI-
PAMBAK AND AGHSTEV-TAVUSH)**
SUMMARY

Actuality of the topic. The complexity of physical and geographical conditions, geology, lithology, topographic features, specialization of agricultural production cause the occurrence, activity and nature, as well as the geographic distribution of various natural and anthropogenic risks.

During the process of scientifically unjustified use of the territories of Lori-Pambak and Aghstev-Tavush in economic purposes the overall balance of natural and socio-economic components of ecosystems is being disturbed.

All this leads to disturbance of the natural hydrological balance, gravity, micro-seismic conditions of these territories: accordingly, to increasing of mudflow, landslide, water erosion and other natural and anthropogenic risks.

The aim of the thesis is the research, evaluation, forecasting and development of ways of natural and anthropogenic risks management in mountainous natural-technogenic ecosystems of Lori-Pambak and Aghstev-Tavush of RA. To implement field instrumental, mapping, geomorphologic, morphometric methods as main research methods, as well as the methods of statistical analysis of revealing, assessing, forecasting and managing natural and anthropogenic risks. To develop specific content and principles for designing large-scale synthetic engineering maps for managing the studied ecosystems on the base of research results.

Scientific novelty.

1. The entire complex of natural and socio-economic systems that cause the nature and features of the modern natural and anthropogenic risks and their distribution in ecosystems of Lori-Pambak and Aghstev-Tavush is studied for the first time by the usage of complex methods in 2 of natural-technogenic mountainous ecosystems.
2. Methods for studying the essence, character and nature, activity and geographical distribution of natural and anthropogenic risks in two large and sharply different ecosystems of RA is designed and applied in practice,
3. The principles and methods of classification, criteria for evaluating natural and anthropogenic risks, as well as their prediction and control is worked out,

4. A method of forming and designing of large-scale engineering and synthetic maps of natural and anthropogenic risks in Lori-Pambak and Aghstev-Tavush is worked out and applied in practice,
5. The principles of the method of graphic representation of options and management of natural and anthropogenic risks in mountainous geosystems have been worked out,

The research results can be summarized in the following main conclusions:

1. The studied geosystems of Lori-Pambak and Aghstev-Tavush have significant natural and labor resources, they have significant importance in organization and development of the economy of RA. Meanwhile, these geosystems are the most vulnerable to natural-anthropogenic pressures and risks,
2. Due to the scientifically unjustified use of the territory an activation of many natural and anthropogenic risks increasing the tension of mudflows, landslides, water erosion and other negative processes that cause significant damage to economy of these territories is being observed nowadays,
3. In order to reduce the negative effects of unwanted risks during the economic usage of the territories a comprehensive and detailed study of all components of complex natural and socio-economic geosystems, as well as the development of the most appropriate ways of governance are required,
4. The nature, character, geographical spread and danger of risks in the given areas are investigated and established. For this purpose it was necessary to group all kinds of risks in three types, according to their nature and character.
21. For predicting and management it is advisable to develop a special content and to prepare large-scale synthetic engineering-geographic maps of natural and anthropogenic risks. Graphical representation of the research results provides a comprehensive view of their distribution and facilitates the use of these maps for the purposes of resolving pragmatic problems associated with optimizing the use of the territory without any risks.